

Թեան մեջ եթէ արժէք ունեցող բան մը կայ, Հայր Արսէնի և Շարսալի քերականութիւններէն առնուած մասերն են. ապա եթէ Պ. Սուրէնի օրինակած կտորներուն թէ գաղափարը և թէ բացատրութիւնը մերն է միայն, ան առանձնաբար պիտի ըլլայ ինչպէս որ է իսկ թէ Պ. Սուրէնի Քերականութեան մէջ եթէ արժէք ունեցող բան մը կայ, մեր Քերականութիւններէն առնուած մասերն են:

Ա. Մ. ԳԱՐԱԳԱՆԵԱՆ.

Մասիս, Թ. 4620, Դեկտ. 12:

Կ Տ Ա Կ Ա Գ Ի Բ .

Փոփոխութիւն մէջ կկարգաւք:

Հասան փաշա խանի սենեկապետ Հանգուցեալ Մ. Սարգիս աղա՝ որոյ յուղարկաւորութեան հանդէսը կատարուեցաւ երեքշաբթի օրը, ի կենդանութեան հետեւալ կտակն ըրեր է, զոր կհրատարակեմք ի յիշատակ բարեսէր Հանգուցելուն և յօրինակ այլոց:

«Ստորագրեալս իմ ազատ և յօժար կամօքս յայտ առնեմ և կկտակեմ, նախ առաջի Աստուծոյ և ապա ի ներկայութեան Մայր եկեղեցւոյ լուսարարապետ Արժ. Տէր Սուրբիոս հօր, եղբայրս Յակոբ աղայի, քոյրերս Ներսար և Սինեմ տուտուններու, Արուս հանրմի, Էնիշտէներս Գաւիթ և Պետրոս աղաներու, և Զինիլի խանի Օտապաշի Պաղտասար աղայի, որ յետ վախճանիս ժառանգորդացս ձգած զոյքէս հետեւալ գրուածքը ամենայն ճշդութեամբ բաշխուի:

Ա. Մայր եկեղեցւոյ զպրաց ուսումնարանի՝ նստած տունէս ունեցած կէս բաժինս:

Բ. 50 Օսմ. ոսկի Մայր եկեղեցւոյ նորոգութեան.

Գ. 50	»	»	Ազգ. Հիւանդանոցի.
Դ. 25	»	»	Տնանկ աղքատաց.
Ե. 25	»	»	Փոքր Ախոյ սովատանկ աղքատաց.
Զ. 20	»	»	Եւնիգափուի եկեղեց.
Է. 20	»	»	Կէտիկ փաշայի »
Ը. 20	»	»	Գումգափուի »
Թ. 5	»	»	Վախճանէս ութն օր ետքը՝ Մայր եկեղեցին պատարագ ըլլալու համար ժամուց.
Ժ. 2	»	»	Քահանայից Մայր եկեղեցւոյ.

ԺԱ. 2 Օսմ. ոսկի Պաշտօնի համար Լուսաստորեայի մոմի փոյ.

ԺԲ. 1/2 » » Լուսարարաց Մայր եկեղեցւոյ.

ԺԳ. 1/2 » » Ժամակոչեաց Մայր եկեղեցւոյ:

220 Երկու հարիւր քսան ոսկի Օսմ.

Աւստի վերոյիշեալ կտակներս իւրաքանչիւր տեղւոյն բաշխմանը համար իմ կողմանէս յիշեալ մեծապատիւ Պաղտասար աղան լիազօր կերպիւ կտակակատար կարգած եմ, որ առանց այլայլութեան ամենայն ճշդութեամբ կատարէ:

ՍԱՐԳԻՍ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Փունջ Թ. 957, Նոյեմբ. 16:

ՄԻԽԱԵԼԵԱՆՔ ՎԷՆԵՏԻԱՅ.

Վաղուց ի վեր գրեթէ ընդհանուր կարծիք մը կար ազգին մէջ թէ Վենետիկի Մխիթարեանք՝ Հայ — Վաթիկի կղերին ազատամիտ կամ գոնէ համեմատաբար նուազ մոլեռանդ մասը կրկադմէին. այս կարծեաց սկսալ ըլլալը որ 1853ին առաջին անգամ հասկեցուած էր, այս օրերս կրկին հաստատութիւն կը գտնէ Հասունեանց և Հակահասունեանց մեծ կռուին առթիւ, և բնաւ երկբայութիւն չըթողուր, որ Վաթիկի կղերին ամենէն մոլեռանդ կամ նախապաշարեալ մասը Բօլէճիներէն ետեւ՝ Վիեննայի և Վենետիկի Մխիթարեանց մէջ պէտք է փնտռել:

Անցեալները Վենետիկի Մխիթարեաններէն՝ Սօրդուճեան Հայր Յովհաննէս Վարդապետը վախճանելով, ի մեծ զարմանս Վաթիկի Հայոց լուսամիտ մասին՝ տեսնուեցաւ որ յիշեալ Վարդապետը վախճանին մօտ Լատին կրօնաւոր մը կանչել տալով՝ Հասունեանի զէմ ապստամբ ըլլալուն վրայ գրով զղջում յայտնել և մեղայ գոչելով թողութիւն խնդրել էր Պապէն:

Այս օրերս ալ Շարգ լրագրին մէջ Հիւրմիւղեան Եգուարդ Գերապայճաօի մէկ յայտարարութիւնը կը տեսնուի որով յիշեալ Գերապայճաօը Պապին անսխալականութիւնն ընդունելով, անոր ամեն հրամանաց և ակնարկութեանց ինչպէս նաև Բէվէրստրուս անուն կոնդակին մէջ պարունակեալ հրամանաց և կանոնաց ամենաշուրջ և ամենահնազանդ հաւատացեալ կը դաւանի զինքը և Հակահասունեան Վաթիկի Հայերն իբրեւ հերձուածող և մոլորեալ կը դատապարտէ:

Մասիս Թ. 4614, Դեկտ. 28: